ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՔՆՆԱՐԿՈՒՄ « ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ԹԵՄԱՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

07.03.2024 21:59

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

Հարգելի՛ գործընկերներ,

Տեղեկացնում ենք, որ այսօր Ազգային ժողովի Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովում ՀՀ փաստաբանների պալատի ներկայացուցիչների հետ տեղի ունեցավ հանդիպում-քննարկում «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ խնդրահարույց դրույթների թեմայով:

Քննարկմանը ներկա էին ՀՀ ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Վարդանյանը, ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Բաբկեն Թունյանը, ԱԺ «Հայաստան» խմբակցության քարտուղար Արծվիկ Մինասյանը, ինչպես նաև ԱԺ խմբակցությունների պատգամավորներ:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը, հանձնախմբի անդամներ Արմեն Ասատրյանը, Արմինե Ֆանյանը, Նիկոլայ Հակոբյանը ներկայացրին նախագծի խնդրահարույց դրույթները և դրանց ակնհայտ բացասական ազդեցությունը իրավապաշտպան գործունեության վրա:

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը ներկայացվեց ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Արման Պողոսյանի կողմից:

Քննարկման արդյունքում պայմանավորվածություն ձեռք բերվեց շարունակել քննարկումները՝ ընդունելի լուծումներին հասնելու նպատակով:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })